

Իրար հետ ձեռք թօթուելով՝ ես հարցրի նրա ծնողների առողջութեան լուրը, և ես վախեցայ երբ նա ասաց որ՝ նրանք հլ պիտի գային զինարանը և որ ամեն ըոպէ սպասուում էին:

«Եթէ նրանք զան՝բանս կը վատանայ», մտածեցի ես, որովհետև այստեղ անկարելի է արգելել նրանց որ չծանօթանան դեսպանի հետ. և եթէ նրա մօտ տիկին Հոգը «Իշխան» կոչի ինձ, անկասկած իմ անցեալ թշուառութիւնը կը վերանորոգուի 7 հաւանականաբար կը խայտարակուեմ այս պաշտօնեաների մօտ:»

Տեսնելով որ այդ ըոպէին դեսպանը շատ ուրախ տրամադրութեան մէջ է՝— և իսկապէս նա իրաւունք էլ ունէր շատ ուրախանալու, քանի որ կարողացել էր ստուգել որ Անգլիայի դրութեան մասին մեր ունեցած երկիւղներն անտեղի և անհիմն էին— ես մօտեցայ նրան և կամացուկ ասացի:

— Եթէ դուք, ռվ դեսպան, ցանկանում էք ինձ իշխան կոչողներին «հայրերը այրել», բխմիլլահ, ահա ժամանակն է. տեսէք, ահա նա (մատնացոյց անելով երիտասարդ պաշտօնեային) դրանցից մէկն է:

— Այդ ի՞նչ խօսքեր են, Հանջի, ասաց նա քաղցրութեամբ. ի՞նչ որ անցել է՝ անցել է:

— Տէր, ասացի ես, այս մարդիկը չեն հասկանում մեր վարքն ու բարքը. ի՞նչ էլ որ ես նրանց ասեմ, նրանք դարձեալ կը շարունակեն ինձ հետ վարուել՝ ինչպէս մի մեծ անձնուորութեան հետ. մինչդեռ դուք լաւ գիտէք որ ես ո՛չ այլ ոք եմ եթէ ոչ Սպահանցի սափրիչ՝ Գերբելայի Հասանի որդին:

— Գնահ, գնահ, ասաց նա, այդ բանի մասին՝ այլևս ո՛չ մի խօսք:

Մեզ հրաւիրեցին մի գեղեցիկ սենեակ, ուր սեղանի վրայ դրուած էին բազմատեսակ զովացուցիչ ըմպելիք և անուշեղէն, և մի խումբ լաւ հագնուած խանութներ պատրաստ սպասում էին մեզ ընդունելու: Մենք արդէն վաղուց նկատել էինք որ Անգլիայում ոչ մի բան չէ կարելի անել առանց կնոջ մասնակցութեան և մէկ էլ առանց ուսելու, հետևապէս շատ էլ չզարմացանք երբ տեսանք որ այդ մի խումբ կանայք սպասում էին մեզ ընդունելու:

Շուտով յայտնուեց որ իմ բարեկամ Հոգերն եկել են, և մի ըոպէ չանցած նրանք մտան սենեակը: Պառաւ տիկինը առաջ ընկած և իր աղջիկները իր ետևից՝ մօտեցան ինձ առանց ձեւականութեան, և իսկոյն խնդրեցին ինձ որ ծանօթացնեմ դեսպանի հետ: Ես խոհեմութիւն համարեցի չմերժել նրանց խըն-

դիրքը, և դառնալով Միրզա Ֆիրուզին՝ ասացի պարսկերէն լեզուով.

—Սրանք են իմ բարեկամները—պիղծ գազանները: Ի սէր ձեր դաւակի՛ մի բան ասացէք սրանց և ազատէք հոգիս:

Նա շատ բախցրութեամբ կատարեց խնդիրքս և ծիծաղելով ու մատը դէպի ինձ մեկնելով՝ ասաց անգլիէրէն լեզուով.

—Տիկին, իշխան ինձ ասի, որ դուք իր շատ լաւ բարեկամ է: Նա շատ լաւ, շատ մեծ իշխան. նա շատ սիրի բոլոր խոզեր և ձեզ էլ շատ սիրի:

Դեսպանի այդ խօսքերը որ ինձ ծաղրիլ էր՝ տիկինը ընդունեց որպէս լուրջ խօսքեր և իր ծունկը մի-երկու անգամ ածրացնելով ու բարձրացնելով՝ կարծես թէ կորցրեց խօսելուց կարողութիւնը և միայն կարողացաւ ասել:

—Այո, ձեր վսեմափայլութիւն... Հն ձեր վսեմափայլ... լու...թիւն... հէյ... ձեր վսէ... մա... փայլու... թիւն...

Ես շատ բախտաւոր էի որ այդ բոլորէն տիկինն իր շփոթութեան մէջ մոռացաւ ինձ էլ, իմ գլխաւորութիւնն էլ: Իսկապէս դեսպանի խօսքերը շատ վատ ազդեցին նրան: Բայց նա մի բիշ սթափուեց, երբ դեսպանը տեսնելով գեղեցիկ Բէսիին ասաց.

—Իշխանը շատ լաւ ճաշակ, տիկին, մաշալլահ, բոլոր պարսիկներ սիրի լաւ լուսնի երես:

—Ձեր վսեմափայլութիւնը շատ բարի է, ասաց տիկին Հօգը: Բէսին գեղեցիկ է, բարի է, այս էլ իմ Մէրին է. շատ ազնիւ աղջիկ է, շատ սիրոււ է աղքատներին:

—Փէնա բէ Պօդա, բացականչեց դեսպանը դառնալով ինձ. ազատուէնք այս անմաքուր գազաններից:

Եւ նա շրջուեց խօսելու մի շատ գեղեցիկ աղջկայ հետ, որին իր մայրը բերել էր դեսպանի մօտ՝ ծանօթացնելու նրա հետ:

Բարեկամուհիներս վերջապէս տեսան որ իմ իշխանաւորն էլ ինձ իշխան կոչեց. նրանք չէին կարողանում իրանց խորին շնորհակալութիւնը լիապէս արտայայտել այն բարութեան համար՝ որ ես արել էի՝ իրանց ծանօթացնելով դեսպանի հետ: Ես ինքս էլ ուրախանում, պարծենում էի, որ կարողացել էի ոչ միայն իմ աներ որդութիւնից ազատուել, այլ և օգտուել. և այսպէս աշողութեան արևը կրկին սկսեց փայլել վրաս:

Սրանից յետոյ, ես սկսեցի աւելի վստահութեամբ մտածել իմ սիրոյ և հիացման առարկայի մասին: Սեղանի վրայից վերցրի մի նարինջ և մատուցի նրան և նրա ականջի մօտ մի-

Արկու անգամ բաւական բարձր հոգոց հանեցի: Մի անգամ էլ վերարկուիս փէշը քսեցի նրա սամոյրէ վերարկուին:

Ես շարունակեցի զանազան ձևերով նրան ցոյց տալ իմ բուռն սիրոյ զգացմունքն, բայց թէ անգլիացիք էլ նոյն ձևերով էին սիրաբանութիւն անում՝ այդ ես չգիտէի: Այդ մի հարց էր, որ ինձ համար դեռ պիտի լուծուէր, և ես շատ մտահոգ էի դաս սովորել անգլիացի երիտասարդից:

Ես ինչ ձևեր էլ որ բանեցնէի, ինչ սիրային ցոյցեր էլ որ անէի, թերևս Բէսիին անհասկանալի կը լինէր, և զուր կանցնէին ջանքերս. հետևապէս վճռեցի նախ կատարելապէս հասկանալ գործս, ապա գործել: Այսպէս վճռելով՝ ես սկսեցի շուրջս դիտել, տեսնելու թէ ներկայ եղողների մէջ այդ փափուկ կրթի—սիրոյ և սիրաբանութեան նշանը կար:

Իմ երիտասարդ բարեկամը—սիրուհուս եղբայրը նստած էր շատ մօտ ան աղջկայ՝ որին իր մայրը ծանօթացրել էր Միրզա Ֆիրուզի հետ: Ես նկատեցի որ այդ երկուսի մէջ՝ աչքերը մեծ դեր էին կատարում...

«Հն, մտածեցի ես, աչքերով իրար հետ խօսելու մէջ՝ մենք շատ վարպետ ենք: Պարսկաստանում առանց դրան՝ սիրահարութիւն չէ կարող լինել:»

Յետոյ ես տեսայ որ տղամարդկանց կողմից կանանց ուսերին շալ ձգելը և նրանց ձեռնոցները վերցնելն և նրանց տղան էլ՝ սիրաբանութեան ուրիշ միջոցներ են:

«Այս նոր բան է ինձ համար, մտածեցի ես. ես պիտի լաւ ուշադրութիւն դարձնեմ և սովորեմ:»

Մի անգամ ես նկատեցի որ օրիորդը շիկնեց:

«Օ՛, երանի թէ ես էլ կարողանայի անպէս անել որ իմ չքնաղ Բէսին էլ շիկնէր, մտածեցի ես: Եթէ այդ կարողանամ անել, այն ժամանակ գործս կատարեալ կը լինի:»

Ես նկատեցի որ երիտասարդն էլ կարմրեց:

«Մորուքս կը կտրեմ, մտածեցի ես, այն պիտի կտրեմ, որովհետև եթէ արեգակի պէս էլ շառագունեմ, սև մօրուքս չի թողնիլ որ երևայ:»

Այդ բոպէին դեսպանը քաշուեց սեղանի մօտ, և երկու տիկիներն—նրանք անշուշտ այդ խմբի գլխաւոր անձնաւորութիւններն էին—նստան մէկը նրա աջ՝ և միւսը ձախ կողմը: Եւ երբ նա տեսաւ որ նրանք նստան իր աջ ու ձախ կողմին, բարձրաձայն իր մօտ կոչեց վերոյիշեալ գեղեցիկ հուրիին և իր անձեռողը ծածանելով նրա երեսին, խնդրեց որ նա զար իր մօտը նստէր: Բայց, ի հարկէ, նա իր այդ վարմունքով վշտացրեց, վիրաւորեց երկու տիկիներին:

Բոլորը լուսին և շուարեցին դեսպանի այս վարմունքի վրայ, և պարզ էր որ երիտասարդներն ինչպէս և ծեր տիկիւնները շատ նեղացան:

— Շատ տարօրինակ բան, մըթմըթաց պառու խանութներէց մէկը:

— Շատ անկիրթ, նկատեց միւսը:

— «Թաշկինակ ձգելը» այս էր համ, ասաց ինձ մի հասակաւոր մարդ, որի քիթը այնքան կարմիր էր՝ որպէս իր բաճկոնը և մազերն այնքին սպիտակ՝ որպէս իր վարտիքը:

— Ի՞նչ ձգել, պարո՞ն, հարցրի ես:

— Երբ ձեզանից մէկը սքանչանում է մի տիկնոջ վրայ, նա իր թաշկինակը ձգում է նրա վրայ, այդպէս չէ՞, պատասխանեց նա:

— Ո՛չ, այդպէս չէ, ասացի ես, որովհետև շատ քիչ է պատահում որ մենք թաշկինակ գործ ածենք. ուտելուց յետոյ միայն մենք գործ ենք ածում թաշկինակը, մեր մատները մաքրելու համար, մէկ էլ որ ճանապարհորդութեան ժամանակ մենք փլաւը թաշկինակի մէջ ենք ածում ճանապարհին ուտելու համար:

Տարիքաւոր զինուորը ներողութիւն խնդրեց և զարմացաւ ասածիս վրայ. բայց միևնոյն ժամանակ շնորհակալ եղաւ իմ տուած տեղեկութեան համար և իսկոյն հաղորդեց իր մօտ նստողին:

Դեսպանը սեղանից վերկենալով, ազատեց իր սիրած աղջկան մի դրութիւնից որը, ինչպէս երևաց, այնքան էլ հաճելի չէր նրա համար, թէպէտ նրա մայրը կարծես թէ եօթերորդ երկնքումն էր, որովհետև այնքան պարծենում էր որ դեսպանը իր աղջկան այդքան նշանակութիւն էր տուել:

«Թող ես մերկ լինեմ, թող ապրեմ արմատներ ուտելով, թող քնեմ գայլախազների վրայ, այնքան լինի որ ես համարում ունենամ», ասում է անապատում թափառող դէրվիշը:

Միևնոյն բանը մտածում են անզլիացիները. անուն և համարում— այս երկու բաները նրանց համար ամեն բանից աւելի բարձր նշանակութիւն ունեն, և նրանք ամեն կերպ աշխատում, ձգտում են շահել դրանք: Այդ երկու բաները ունենալու համար Մէրին սիրրով կը մարտիրոսանար, Բէսին չինական կօշիկ կը հագնէր իր ոտքերը սեղմելու համար, Ջէսին կը թաղուէր գրքերով լեցուն մի նկուղում, և նրանց պառու մայրը քաշ կը գար մի Duchess Begum-ի պոչից:

Մենք վերջապէս ճանապարհուեցինք դէպի տուն: Ամբողջ

ժամանակը ճանապարհին միտքս զբաղուած էր Բէսիով, և ես մերթ խրախուսուած էի, մերթ յուսահատուած:

Գլ խը

Հացի Բարան սոխորում է սիրոյ արհեստը, որը նա գործադրում եւ սաստիկ թշուառանում է:

Հետեւեալ առաւօտը քնից զարթնելով՝ «Այլևս չպիտի ապրեմ այս անորոշ դրութեան մէջ», ասացի ինձ ու ինձ, և այդ որոշումը կրկնեցի գլուխս սանտրելու ժամանակ՝ հայելու առաջ կանգնած:

«Ահա, մազերս սկսում են կամաց կամաց սպիտակել», ասացի ես տեսնելով մի քանի հատ սպիտակները խիտ մազերիս մէջ: «Բայց եթէ մի քիչ էլ ուշացնեմ, ոչ մի անհաւատի աղջիկ ինձ չի սիրի, թէկուզ մեր օրհնեալ Մարգարէի եղբոր որդին լինեմ»:

Ես վճռեցի սէրս անյապաղ յայտնել իմ սիրուն Բէսիին և օրինաւոր ամուսնութիւն առաջարկել նրան: Այն խօսակցութիւնը որ ես սկզբում թատրոնում ունեցել էի նրա սօր հետ, դեռ թարմ էր մտքումս: Այն ժամանակից ես իմացել էի որ նրա իւրաքանչիւր աղջիկը մէկ քուրուր թուման օժիտ պիտի ստանար, և եթէ այդքան փող իմ գրպանը մտնէր, Պարսկաստանում էլ ռո շունը կը համարձակուէր խօսել իմ պապերի պատուաւորութեան կամ ոչ պատուաւորութեան մասին:

Բայց առաջ քան այս քայլ անելը, ես մտածեցի մի ֆալ բաց անել Հաֆէզից:

«Թող տեսնեմ, ասացի ես, տեսնեմ ի՞նչ կ'ասի իմ առաջնորդը»:

Եւ յաջողութեան համար՝ ես նախ կատարեցի լուացման արարողութիւնը, աղօթք արի և յետոյ գիրքը վերցնելով՝ արի հարկաւոր կոչը, և շատ երկիւղածութեամբ բաց արի:

«Վերցրու վարդը որտեղ որ կը գտնես, բայց զգուշացիր որ մատներդ չճանկրտուեն», ասում էր գիրքը:

«Փառք Ալլահին, սա լաւ է, ասացի ես. իսկ մատներս չճանկտելու համար՝ ոչինչ. որովհետեւ ամբողջ կեանքումս նրանք համարեա միշտ ճանկրտուել են: Բացի դրանից, ի՞նչ քան էլ որ մի անհաւատ աղջիկ ինձ թշուառացնելու լինի՝ գոնէ ինձ չի պատճառիլ այն տանջանքը որ ես կրեցի կէս-դե

Շաքարլարիի ձեռքից: Բիսմիլլահ, ասացի ես, և իմ ամենալաւ շալով գօտէպնդուեցիք:

Բայց էլի ես զգում էի որ դեռ բոլորովին անծանօթ եմ ֆրանկների սովորութիւններին, և որ ես չպէտք է իմ մտածած քայլն անեմ, առանց նախ լաւ ծանօթանալու նրանց հետ:

«Արդեօք հարկաւոր է որ ինքս անձամբ առաջարկեմ նրան. արդեօք հարկաւոր է որ, ինչպէս մեր երկրում մի զիս (ւէֆիդէ<sup>1)</sup>) կին ուղարկեմ որ իմ կողմից առաջարկի. արդեօք ընծաներ էլ հարկաւոր են, և արդեօք հարկաւոր է որ նախ մի թաքաղով քաղցրաւենիք ուղարկեմ նրա համար՝ ապա ըսկսեմ բանակցութիւնս».— սրանք բոլորը հարցեր էին, որոնք պիտի լուծուէին: Ես չէի կամենում այդ հարցերի մասին խօսել մէհմանդարի հետ, մի գուցէ նա կասկածէր նրան ամուսնութիւն առաջարկելու:

Նազիրը համաձայնեց որ կարծիքս սխալ չէր:

Այդքանը բաւական էր ինձ իմանալ:

«Եթէ ինձ էլ այդպիսի մի առիթ ներկայանայ», մտածեցի ես, «ես կաշխատեմ օգտուել»:

Ես գնացի Մոհամէդ բէգի մօտ և հարցրի թէ պարսիկների աչքում ինչ նշանակութիւն ունին այդ երեք բաները— հովանոցը, անձրևը և տան մուտքի կամարը: Քիչ խօսելուց յետոյ երկուսս էլ համաձայնութեան եկանք որ երեքն էլ շատ բարի նշանակութիւն ունեն.— հովանոցը թագաւորական նշան էր, որովհետև Ձէմշիդի օրից՝ ո՛չ ոք, բացի թագաւորներից և նրանց որդիներից՝ հովանոց գործածելու իրաւունք չունէր Պարսկաստանում. յետոյ տան դռան կամարը որպէս մէշիդի կամ պալատի մուտք՝ միշտ փառքի և աջողութեան նշան էր, իսկ անձրևը մի բարիք՝ որի համար մենք աւելի շատ ենք ազօթում քան որ և է ուրիշ բանի համար, և որը ուրիշ խօսքով նշանակում է առատութիւն և երջանկութիւն: Յետոյ մի ուրիշ հանգամանք էլ որ իմ աչքում բարեգուշակ էր, այն էր որ եկեղեցի գնալիս՝ փեսայացուն ու հարսնացուն առաջից են գընում եղել, իսկ հարսնացուի ծերունի հայրն ու մայրը նրանց ետևից: Եթէ հայրն ու մայրը նրանց առաջն ընկնէին և կամ նրանց աչքի առաջ երևային եկեղեցի գնալիս՝ այն ժամանակ գուցէ իրերը հակառակ չգնային. որովհետև անհերքելի ճշմարտութիւն է որ մի պառաւ կնոջ երևալը դժբախտութիւն է բերում, և որ նրա հայեացքը գրեթէ մահացու է:

1) Սպիտակահեր. Տ. Թ.

Այն օրից ինչ ես սկսել էի Բէսիին սիրել, Մոհամէդ բէ-  
զինն ինչն չէի ասել իմ դիտաւորութեան մասին. որովհետեւ  
նա իր խիստ սկզբունքներով կը հակառակէր ինձ և երբէք թոյլ  
չէր տալ որ մի ճշմարիտ հաւատացեալի որդի ամուսնանար մի  
անհաւատի աղջկայ հետ: Նա միայն այն ժամանակը կը համա-  
ձայնէր, երբ տեսնէր որ անհաւատ աղջիկը նախ ուրանում է  
իր հաւատն ու կրօնը յետոյ ամուսնանում. բայց մինչև անգամ  
այդ դէպքում էլ՝ նա այդ կնոջը օրինաւոր ամուսին չէր համա-  
րել, այլ մոթի (ստրուկ):

Ինչպէս երևումէր, Մոհամէդ բէզը ամենևին չէր հաս-  
կանում թէ ինչ նպատակով էր որ ես հետաքրքրում էի ի-  
մանալ թէ Ֆրանկներն ինչ ձևով են սիրահարութիւն անում.  
և ես բոլորովին միամտուեցի, որ ինձանից զատ՝ ոչ ոք չգի-  
տէր իմ գաղտնիքը:

Յիշելով անգլիացի նազիրի ասածները, վճռեցի իսկոյն  
գնալ իմ նազիրի Բէսիի մօտ և բախտս փորձել: Մեր տան  
դռնից դուրս գնալիս՝ ես աջ ոտս առաջ դրի, փչեցի ուսերիս  
վրայ ու դուրս գնացի: Ես չմոռացայ վերցնել մի հովանոց որ  
դրուած էր մեր դռնի ճիւղի անկիւնում.

Եթէ ես այնքան բախտաւոր լինէի որ ինձ համար էլ ա-  
ռաջ գային նոյն հանգամանքները, որոնց շնորհիւ անգլիացի  
նազիրը կարողացել էր իր սիրահարութեան գործը արդիւնա-  
ւոր դարձնել՝ ես էլ անշուշտ նոյն աջողութեանը կը հանդիպէի.  
Բայց ինչպէս բանաստեղծներից մէկն ասում է՝ «Մէրը շինուած  
է անորոշութիւններից: Ինչպէս դաշտի ծաղիկները, որոնք եր-  
բեմն զօրեղանում են, երբեմն էլ կտոր-կտոր են լինում նրան-  
ից՝ այնպէս էլ սէրը փոփոխակի զօրեղանում ու թուլանում է  
ըստ ժամանակին և եղանակին»: Եւ այդպէս, մտածեցի ես,  
գուցէ դա գործել է իմ սրտի սիրուն տիրուհու հակումների  
վրայ:

Ճանապարհին վատ նախազգացումներ ունեցայ. ես յաճախ  
մտածում էի որ աւելի լաւ կը լինէր մի գիւ սէֆիդի միջոցով  
խօսելի Բէսիի հետ քան ինքս գնայի անձամբ խօսելու: Ինչ և  
է, ես հասայ նրանց տան դուռը և պատրաստում էի երեք ան-  
գամ դարկել՝ երբ յանկարծ դուռը բացուեց և առջևս կանգնեց  
տիկին չազը և նրա ետևը՝ սրբակեաց Մարիամն և իմ յոյսն ու  
սէր Բէսին:

Ինձ տեսնելուն պէս՝ նրանք ուրախութեան բացական-  
չութիւններ արին: Այդ լաւ նշան էր, բայց ես շատ ուրախ  
կը լինէի եթէ դուռը բացուելիս ամենից առաջ պառաւ տիկնոջ  
աչքերը չընկնէին վրաս. «այնուամենայնիւ, մտածեցի ես, եթէ

կարողանամ այնպէս անել որ նա մեր յետևից ներս գայ տան մէջ՝ ինչալլահ՝ ամեն բան յաջող կը գնայ»:

Նրանք հրաւիրեցին ինձ կատարել այն սովորութիւններից մէկը, որ անգլիացիք ամեն օր կատարում են. այսինքն աննպատակ շրջել այս ու այն կողմը. որովհետև երբ տիկնոջը հարցրի թէ «ուր էք գնում», նա պատասխանեց.

—Որո՞ղ տեղ չենք գնում. մենք գնում ենք մի քիչ շրջա-գայլելու:

Յիշելով նազիրի խօսքերը՝ ասացի.

—Միթէ այսօր եկեղեցի չկայ, տիկին, դուք եկեղեցի չէք գնում:

—Ո՛չ, իշխան, ասաց նա. այսօր եկեղեցիքը փակ են. միայն կիրակի օրերն են բաց:

—Պարսկաստանում, տիկին, ասացի ես, մէջիդները միշտ բաց են, և մարդիկ գնում են աղօթելու ինչ ժամանակ որ ցանկանում են:

Եւ այս ասելով, ես, ըստ ֆրանկների սովորութեան, թեա տուի լուսներես Բէսիին, որն առանց տատանուելու ընդունեց և մենք առաջ ընկանք:

Մենք այնպէս թեանցուկ գնացինք մինչև փողոցի ծայրը և յետոյ, ի մեծ ուրախութիւն իմ, անձրևի նշաններ երևացին. և շուտով անձրևն սկսեց տեղալ:

Տիկին Հողը և իր աղջիկները մտածեցին տուն վերադառնալ, բայց ես այնքան ստիպեցի նրանց պատասպարուել մեզ մօտ գտնուող մի տան մուտքի կամարի տակ, որ նրանք անձարացած համաձայնուեցին: Ուրախութիւնիցս սիրտս բերանս էր թռչում, և ես պատրաստուում էի նազիրի օրինակին հետևել՝ երբ տիկինը յանկարծ տեսնելով մեր մօտից անցնող մի քանի մարդիկ՝ պոռաց.

—Իշխան, եկեք գնանք. եթէ մենք այստեղ աւելի մնանք, կը մրսենք ու կը մեռնենք:

Տիկնոջ այս խօսքի վրայ՝ ես կարկամեցի և չկարողացայ արտասանել այն նախադասութիւնը, որ ես պատրաստ ունէի շրթունքներիս վրայ. սկսեցի տատանուել երկնքի և երկրի մէջ տեղ: Մենք ճանապարհ ընկանք դէպի տուն. անձրևը սաստկացաւ և մեր շրջագայելը վերջացաւ: Մենք քայլում էինք արագ որքան կարողանում էինք. բայց դեռ տան դուռը չհասած՝ անձրևը այնքան վաւարեց՝ այնպէս հեղեղ սկսեց թափուել՝ որ մենք պարտաւորուեցինք պատասպարուել մեր ճանապարհի վրայ ընկած մի տան մուտքի կամարի տակ:

«Այստեղ ուրեմն, մտածեցի ես, պիտի վճռեմ իմ բախտը»,

և մտքուժան բխամիլլան՝ ասելով՝ շշնջացի իմ լուսններեսի ականջին.

—Դու իմ [Թուլթի շաքար խահրն<sup>1</sup>) ես. ես քեզ սիրում եմ հոգուս չափ, եկ իմ կինը դարձիր, ամուսնացիր հետս:

Նա սաստիկ զարմացաւ, յետ քաշուեց և մի տարօրինակ շեշտով ասաց:

—Ի՞նչ:

Ես իսկոյն աշխատեցի, որքան կարելի էր լաւ անգլերէնով ցանկութիւնս բացատրել նրան, բայց իզմուռ սպասեցի նրանից լսել նոյն պատասխանը՝ ինչ նազիրը ստացել էր իր սիրուհուց: Նա ոչինչ չպատասխանեց և հանդարտութեամբ իր թևը յետ քաշելով՝ մի ինչ որ բան ասաց ինձ՝ որ մօրն ասեմ, բայց ես չհասկացայ թէ ի՞նչ ասեց: Ես շուարեցի և նրա առաջ կանգնեցի ճիշտ այն էջի նման՝ որ ուզել էր կծել, պուկ տալ՝ մի ծաղիկ, բայց ծաղկի փոխարէն կծել, կտրել էր իր լեզուն:

«Նա շող» (չեղաւ) մրմնջացի ես:

Սօսք չկար որ մենք մի հարուած էինք ստացել պառաւ տիկին Հոգի չար աչքից: Բայց էլ ի՞նչ արած: Վերջապէս տան դուռն հասնելով, նա՝ Բէսին ինձ ներս հրաւիրեց, սակայն ես մերժելով նրա հրաւէրը, [սողա հալէզ<sup>\*</sup>] ասացի և վշտացած սրտով տուն վերադարձայ հազար ու մէկ անէծքներ կարգալով:

«Է՛, վերջապէս նա ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի կին, մտածի ես. և ի՞նչու այսքան վիշտ կրեմ նրա համար»:

Գլ. խզ.

Հաջի Բարայի ծրագիրը քրի երես է դալիս:—Նրա գաղտնիքը բացուում է:

Ֆրանկների վարք ու սովորութիւններից այժմ բաւական տեղեակ լինելով և վախենալով որևէ մէկին յայտնել իմ դրութիւնը, միևնոյն ժամանակ չկամենալով որ յոյս բուրբոլին կտրեմ՝ գլուխս դրի մտախոհութեան բարձին և վերմակը քաշեցի վրաս:

Երկար ու խորը մտածելով—աւելի քան Արու Ավիսէնան երբևիցէ մտածել էր մի վերահաս վտանգի պատճառի վրայ՝— ես եկայ այն եզրակացութեան որ իմ միակ դարմանը՝ ճարը

1) Իմ շաքար ուզող կամ ուտող թութակն ես, ծ. թ.

\*) Տէր ընդ ձեզ. Աստուած ձեզ պաշտպան, ծ. թ.

ոչ այլ ինչ էր եթէ ոչ համբերութիւնը, որ ոչ թէ բաժակով՝ այլ մեծ գաւաթով պիտի ընդունեմ, և ոչինչ չանեմ, միայն թէ հանդարտ սպասեմ իմ արկածի վերջաւորութեանը՝ ինչպէս սպասում է ամեն մի բարի շիա՝ տասներկուերորդ<sup>1)</sup> իմամի գալստեանը:

Բայց դեռ մի օր չանցած՝ դեսպանն ինձ իր մօտ կանչելով՝ գոռաց.

— Այդ ինչպէս է, մարդ. այդ ինչպէս է որ դու մարդկանց եախից ձեռք չես քաշում, և ամբողջ ժամանակը թափառում ես այս քաղաքում և խայտառակում ես մեր անունը:

— Խայտառակում եմ ձեր անունը, զարմացայ ես. յանուն Ալլահի, ասացէք ինչպէս:

— Այո՛, այո՛, դու քեզ ամեն տեղ իշխան ես հրատակում և այդ դեռ բաւական չէ որ ուզում ես քեզ հանդիպող ամեն մի անհաւատի աղջկայ հետ էլ ամուսնանալ: Այդպիսի բաներ ես անում. այդ ինչպէս է:

— Վայ, զարմանալի մարդիկ են այստեղացիք, ո՛վ Միրզա, բացականչեցի ես: Ո՞վ է զրպարտում ինձ ասելով որ իբր թէ ես կամենում եմ ամուսնանալ: Ես ո՛վ եմ որ այդպիսի բան մտքովս անցկացնեմ: Ինչպէս դուք գիտէք, ես արդէն քանի անգամներ ամուսնացել եմ, քանի կին եմ ունեցել, քանի աներորդիներ եմ ունեցել. դրանք արդէն ինձ բաւական են. ես այնքան կուշտ եմ՝ որ էլ երբէք չեմ ցանկանում այդ ճիւղում բախտ որոնել:

— Միթէ դու այնքան անամօթ մարդ ես, ասաց դեսպանը, որ այդ ձևով կանգնում ես առջև, և խօսքիդ սկզբից մինչև վերջը սուտ ես խօսում: Ահա՛, մէկ ժամ է որ հոգիս դառնացել է քո պատճառով: Մի ժամ առաջ մօտս եկաւ մի դանդաղ մարդ—մի մարդ՝ որ իր դանդաղութեամբ մարդուս քնացնում է: Նա սկսեց մի անվերջ պատմութիւն անել և այնքան բաներ հարցրեց քո և քո հարստութեան մասին, որ ես, մեր Շահի մօրուքը վկայ, շուարել եմ և այժմ աւելի մեռած եմ քան կենդանի:

— Ձեր հօգին վկայ, ասացէք ինձ, ո՛վ դեսպան. ո՛վ էր այդ անձը, և ինչ էր նա հարցնում, ասացի ես:

— Նա ուզում էր իմանալ, պատասխանեց դեսպանը, թէ դու ո՛վ ես, թէ դու արդեօք ի՞նչ գերդաստանի զաւակ ես,

1) Տասներկուերորդ՝ այսինքն վերջին իմամը, որ կուշում է Մէհեդի: Գարսիկները կարծում են որ իբր թէ նա դեռ կենդանի է և յայտնուելու է նոյն Մարգարէի հետ՝ Փրկչի երկրորդ գալստեան ժամանակ:

թէ իշխան՝ տիրողոսդ ժառանգական է թէ չէ, և թէ ինչ եկամուտներ ունես: Նա երդուում էր որ դու ուզում ես ամուսնանալ իր աղջկայ հետ:

— Եւ դուք ի՞նչ պատգիրք:

— Ի՞նչ պիտի ասէի: Ես ծիծաղեցի և նրան հաւաստիացրի որ դու իշխան չես, որ դու մի սափրիչի որդի ես, և որ քո ամբողջ հարստութիւնը, քո ամբողջ ժառանգութիւնը միայն մէկ զոյգ անծելիներ են. ուրիշ ինչ էի կարող ասել:

— Յանուն Ալլահի, ասացէք դեսպան, ո՞վ էր նա՝ այդ մարդը, ծեր էր թէ՞ երիտասարդ, նիհար թէ՞ պարարտ:

— Ես ի՞նչ գիտեմ, բացականչեց Միրզա Ֆիրուզը. նա մի տարիքաւոր մարդ էր, հաստ ու չաղ, կերպարանքը շատ տգեղ. բայց թէպէտ նա այդպէս էր, այնուամենայնիւ նա յանդգնում էր իրան կոչել այն անունով՝ որ կրում է բոլոր բաների ստեղծողը. նա Հազ<sup>1)</sup> էր կոչում իրան:

Ես իսկոյն հասկացայ որ նա «խոզերի հայրն» է եղել, և որ նա եկած է եղել աղուէսութիւն անելու և ստուգելու թէ ես արդէօք արժանի էի իրա աղջկայ ամուսինը դառնալու: Ես մի ըստէ ցնցուեցի. ինքս ինձ վրայ շատ նեղացայ. նեղացայ և դեսպանի վրայ: Այսքան աշխարհ տեսնելուց յետոյ, այսքան փորձանքների հանդիպելուց յետոյ՝ վերջն էլ այսպէս ծաղրի առարկայ դառնալ. այդ անտանելի էր ինձ համար: Սիրտս դուրս էր գալիս բերանիցս, լեարդս ջուր էր կտրում:

— Այժմ ասն հնչի, ասաց դեսպանը. առաւօտ ի՞նչ մոխիր է թափուել գլխիդ. կասկած չկայ որ այդ պառաւ անհաւատը քիչ շուն է դարձել, շանից էլ դեռ պակաս մի բան. որովհետեւ ինչո՞ւ է դէմքդ այդպէս մռայլում. ասն, հոգիդ սիրես, ասն, ի՞նչ է պատահել:

— Ո՛չինչ, վալլահ, բիլլահ, ո՛չինչ. այդ մի պատմութիւն է, որ չարժէ պատմել. ինչ որ անցել է՝ անցել է:

— Պօսիր, մարդ, խօսիր, ասաց դեսպանը. խօսիր, ինչ չարութիւն ես արել այս օտար երկրում: Այդ ձևով մենք չենք կարող ձեռք առնել մարդկանց մօրուքները: Ես գիտեմ որ դու ես հրապուրել այդ պառաւ մարդուն և նրան էլ իր աղջկան էլ մատիդ վրայ խաղացրել: Ասն, մարդ, ինչո՞ւ չես խոստովանում, ինչո՞ւ ես սուտ խօսում:

— Ես արդեն աղաչեցի ձեզ, ո՞վ դեսպան, որ ինքս ինձ

<sup>1)</sup> Պարսիկները Հազ ասելով Աստուած և բառական թարգմանութեամբ՝ իրաւունք, արդարութուն է նշանակում: Երեւի մարդը Հոզ է ասել, բայց դեսպանի ականջին Հազ է հնչել: Ծ. Թ.

երբէք իշխան չեմ կոչել, պատասխանեցի ես: Այստեղի մարդիկ ցնցոտիներ հաւաքողին էլ իշխան են կոչում, եթէ շահ կայ իրանց համար: Դուք մի խրտուիլակ շինէք, մի մօրուք դրէք երեսին, մի շալ էլ մէջքին փաթաթէք և տուէք այդ մարդկանց ձեռքը. յետոյ կը տեսնէք որ նրանք այնպիսի տիտղոսներ կը տան նրան՝ որպիսին մենք տալիս ենք միմիայն մեր օրհնեալ Ալիին:

Դեսպանը բարկանալով ասաց.

— Մարդ, դու ինձ պատասխան կը տամ թէ չէ: Երդուում և՛ Շահի մօրուքով, որ եթէ դու ինձ չասես թէ իմ լած պատմութիւնն ինչ է նշանակում՝ ես կը պարտաւորացնեմ քեզ որ ասես: Ես քեզ կը կապեմ ուղտի ոտկապով և կը զցեմ այս տան ամենամութ ծակը, որտեղ դու կը մնաս մինչև յայտնես ամեն բան:

— Իմ պատմութիւնը կարճ և պարզ է: Այդ ծեր մարդը մի աղջիկ ունի և եթէ դուք ինձ թոյլ կը տաք ճշմարտութիւնը ասել, պիտի խոստովանեմ որ ես սիրահարուել եմ նրա վրայ և խնդրել եմ նրա ձեռքը: Ալլան վկայ է և երդուում եմ թագաւորի աղով, ձեր մահով, մեր օրհնեալ Մարգարէով և բոլոր սուրբ իմամներով՝ որ բոլոր ճշմարտութիւնը հէնց այս է:

Հաղիւ թէ խօսքս վերջացրել էի՝ երբ մտաւ Մոհամէդ բէգը, որին դեսպանն իսկոյն պատմեց եղելութիւնն: Բանս աւելի վատացաւ. որովհետև սա էլ հիմա պիտի սկսէր իր խրատներն ու յորդորները աւելացնել այն կշտամբանքների վրայ՝ որ կրել էի դեսպանից:

— Դու շատ վատ բան ես արել, ասաց նա: Դեսպանը ճիշտ է հրամայում, երբ ասում է որ մենք վատ անուն կը թողնենք այստեղ: Եւ որչափ աւելի վատ համբաւ կ'ունենանք մեր երկրում, եթէ մենք վերադառնանք այնտեղ՝ անհաւատներ դարձած՝ մեր ետեից քաշ տալով անհաւատ կանայք:

— Բայց ո՞վ է կարող ասել որ նա էլ չի փոխիլ իր հաւատը, ասացի ես. սէրը տարօրինակ հրաշքներ է գործում:

— Այդ ինչեր ես դուրս տալիս, հանջի, բացականչեց դեսպանը: Միթէ չգիտես որ այս անհաւատները միշտ մտածում են թէ մեզ ինչպէս կարելի է հաւատափոխ անել: Այստեղի ժողովրդի կէսը՝ այժմ մեր լեզուով թարգմանում է իր սուրբ գիրքը, և միև կէսը զբաղուած է թարգմանութիւնները տպագրելով: Եւ դու ի՞նչպէս ես կարող վատահանալ և ասել թէ որ և է մի անգլիացի աղջիկ՝ երբեիցէ կը հրաժարուի իր հաւատից ու կրօնից, և բեզ պէս մի ողորմելի դևի ետեիցը կընկնի: Հանջի այդքան էլ մի լինիր:

—Մինչև անգամ ասենք թէ քո խաթրու այդ անհաւատ աղջիկը կը փոխի իր հաւատը, ասաց Մոհամէդ բէդը, բայց դու ի՞նչպէս ես կարող ստուգել որ նա հաւատափոխ է եղել:

—Օ, այդ դժուար բան չէ, ասացի ես, թող նա ներկի իր ոտերի տակերը, ձեռքի եղունգները և ասիերը, թող նա իր մորթու վրայ ծակծակել տայ սրբազան կոշեր և ինձ հեռակելով արտասանի Ֆաթէն, և եթէ նա այդ բաներն անի՝ այն ժամանակ ինձանից ու քեզանից պակաս մահմեդական չի համարուի:

—Ալլահը ների ինձ, բացականչեց Մոհամէդ բէզը, և սկսեց գցել, իր թէսբին:

—Գնա, գնա, ասաց դեսպանը. գնա, ես չեմ հասկանում ի՞նչ դէ է մտել գլուխդ՝ որ դու կամենում ես այդ ձևով ամուսնանալ: Միթէ Ձինարն ու Շաքարլարը քեզ բաւական խրատ չտուին:

—Հաւատա ինձ, ասաց Մոհամէդ բէզը, որ եթէ դու յաժառես իրագործիլ քո այդ ծրագիրը, կեանքնդ ֆուսաժ օրերը դու անց կը կացնես վշտերով:

—Հնձի, Պարսկաստանում շատ կանայք կան:

—Բնի, ասացի ես բայց Պարսկաստանի կանայքը ուրանց չափ փող չունեն:

—Փոդ, բացականչեցին դեսպանն ու Մոհամէդ բէզը միաբերան. միթէ այդ խնդրում փոդի բան էլ կայ:

—Բնի, բնի, նա փոդ ունի, ասացի ես.

—Ինչքան, հարցրին նրանք միաբերան:

—Մէկ քուրուր թուման ասացի ես. մէկ քուրուր՝ այն էլ նաղդ (կանխիկ):

—Վալլահ, Բիլլահ, բացականչեց դեսպանը շատ փոխուած տոնով: Որտեղ է նա ապրում. նրանց տան թիւը:

—Միթէ այս Ֆրանկների աղջիկներից շատերը փոդ ունեն, հարցրեց Մոհամէդ բէզը:

—Նրանց մեծագոյն մասը փող ունեն, պատասխանեցի ես: Այս երկրի մարդիկը իրանց աղջիկների համար հոգում են այնքան՝ որքան հոգում են իրանց տղաների համար:

—Փոդ, փոդ, զարմանալի բան է փողը, հառաչելով ասաց Մոհամէդ բէզը երկար լուսթիւնից յետոյ:

—Ա՛յ դու յիմար պառաւ, ասաց դեսպանը, թքել եմ մօրուքիդ վրայ. դու կարծում ես թէ երբ որ փող լինի՝ մի անհաւատ իսկապէս ճշմարիտ հաւատացեալ կը դառնայ:

—Թող աղաչեմ ձեր սպասին, ասաց նա, որ մեր օրհնեալ դուռանի ամեն մէկ էջում մեզ պատուիրուած է կողոպտել ան-

հաւատին և մինչև անգամ օպանել նրան: Ուրեմն ի՞նչ վնաս, եթէ մեզանից մէկն ու մէկը գողանայ մի անհաւատի աղջիկ՝ եթէ նրա միջոցով կարելի է գողանալ և նրա հարստութիւնը: Դրանով մենք միայն կատարած կը լինենք մեր սուրբ Մարգարէի հրամանները, որի գլխի վրայ լինի յաւիտենական օրհնութիւն:

— Ալլահ, Ալլահ, հրաշմիտ մոլլահ ես դու, պատուական խնդրալոյծ աստուածաբան (casuist) ես դու, որոտաց դեսպանը: Ինձ թւում է թէ շուտով զիւլֆերդ կոլորես, աչքերդ կը դեղես մի անհաւատ աղջիկ որսալու համար:

Յետոյ դառնալով ինձ ասաց.

— Գնա, գնա Հաջի, միտքդ հանգստացրու. երբ որ այդ ծեր ֆրանկը կրկին կը գայ այստեղ՝ ես նրան կ'ասեմ որ դու իրօք մի անձնաւորութիւն ես, և որ դու մի ժամանակ մի պառաւ շուն վէզրի զաւակ ես եղել—այն վէզրի՝ որը, փառք Ալլահին, այժմ այրոււմ է ջհաննամում իր պապերի հետ միասին: Բայց դեռ ինձ ասա հաջի, ճիտեղ են գտնոււմ այդ քուրուր թումանները. լսի՛ր, այդ բանում ես քո ընկերը կը դառնամ. մենք կը կիսենք, դու կը վերցնես աղջիկը՝ իսկ ես կը բաւականանամ թումաններովը:

Այս ասելով՝ նա արձակեց մեզ:

### Գլ. խղ.

Լաւ չկազմուած ծրագրի անսխորժ հետեւանքները.— Զաջի Բաբան բարկանում և մի անպիտեքն նամակ է գրում:

Միրզա Յիրուզի ներկայութիւնից հեռանալուցս քիչ յետոյ, սենեակս մտաւ այն անհաւատ երիտասարդը, որին ես տեսել էի Վուլիչում: Նա ծերունի Հոգի որդին էր—իմ լուսներես Բէսիի եղայրը: Նրան տեսայ թէ չէ՝ սիրտս սկսեց սաստիկ բարախել: Ծիշտ է, ես ոչ մի ֆրասակար բան չէի արել, բայց և այնպէս շատ վատ զգացում ունեցայ. որովհետեւ ոչ ոք չէ կամենում տեսնել նրան՝ որը ծանօթ է իր անյաջողութեան գաղտնիքների հետ:

Մենք կատարեցինք ձեռք թօթուելու ծէսը, և իրար «ի՛նչ պէս էք դուք» և «ի՛նչ լաւ եղանակ է» ասացինք: Ես հետաքրքրուեցի նրա ծնողների և քոյրերի առողջութեան մասին. նա սիրով պատասխանեց ինձ, և յետոյ, որքան կարողացայ հասկանալ, նա ասաց որ ինքն եկել էր մօր կողմից՝ հետս մի

քիչ խօսելու իր քրոջ մասին: Նա ինձ հաւաստիացրեց որ իր մայրն էլ, քոյրն էլ մեծ պատիւ էին համարել որ ես իրանց վրայ ուշադրութիւն էի դարձրել ու ամուսնութիւն առաջարկել:

Նրա տուած այդ լրի, վրայ բեխերս ոլորեցի և ասացի նրան, որ եթէ խկապէս այդպէս էր՝ ուրեմն բանը հեշտութեամբ կը կարգադրուէր, որովհետեւ ես պատրաստ էի խսկոյն ամուսնանալ:

Նա յետոյ սկսեց խօսել իմ և իրանց կրօնի տարբերութեան մասին և ակնարկեց որ, եթէ երբ և իցէ մեր ամուսնութիւնը գլուխ գար՝ ես պիտի ընդունէի իրանց ծէսերը և մի խօսքով քրիստոնեայ դառնայի: Նա աւելացրեց որ այդ բանը ամենից շատ պնդում էր իր Մարիամ քոյրը:

Ես հետաքրքրուեցի թէ նա ինչ ծէսեր էր նշանակում, և որքան կարողացայ հասկանալ՝ սրանք էին:—

Ամենից առաջ՝ եկեղեցում մէկը պիտի բարձրաձայն հրապարակէր անունս համարեա այնպէս՝ ինչպէս մենք Պարսկաստանում հրապարակում ենք մեր կորած ձիու կամ էջի անունը<sup>1</sup>). Երկրորդ՝ այս ինչ ըստից պիտի ստացուէր մի գրաւոր արտօնութիւն՝ առանց որին՝ ոչինչ չէր կարելի անել. երրորդ՝ ես պիտի եկեղեցին գնայի մատիս ունենալով մի մատանի. որը պիտի դնէի նրա քրոջ մատը և դրանով ամեն բան վերջացած կը լինէր, միայն թէ եկեղեցուց դուրս գալուց անմիջապէս յետոյ, մենք՝ հարս ու փեսայ պիտի փախչէինք և մի ամբողջ ամիս չերևայինք երկրիս վրայ:

Այս բաները լսելով՝ ես ընկայ տարակուսանքի մէջ. որովհետեւ ինչպէս էր կարելի որ ես, որպէս մուսուլման, ինձ թոյլ տայի կորցնել պատիւս և շան տեղ ընկնել: Ես չհամաձայնուեցի ամուսնանալ այդ ծէսերով և աշխատեցի նրան հասկացնել թէ՛ որքան աւելի դիւրին և պարզ կը լինէր ամուսնանալ մեր ձևով, մեր սովորութեան համեմատ: Ես աւելացրի որ հարկաւոր չէր որ եկեղեցի գնայինք. որ բաւական կը լինէր իմ և հարսի կողմից վէջիլներ (հաւատարմատարներ) նշանակուէին և իրար հանդիպելով համաձայնութեան գային, ապա եթէ հարսի ծնողները կամենային՝ նրան մի ձիու վրայ

1 Պարսկաստանում երբ մի ձի կամ էջ կամ որևէ ընտանի կենդանի կորչում է, նրա տէրը կամ որևէ մի ուրիշ վարձուած մարդ ընկնում է քաղաքի փողոցները և բարձրաձայն յայտարարում է թէ այս ինչ տեսակ կենդանին կորել է, և միևնոյն ժամանակ մի նուէք է խոստանում գտնողին:

կը նստացնէին, թափօր կը կազմէին և սազով (երաժշտութեամբս կը դային ինձ ձօտ. իսկ եթէ այդ ձևով էլ չուզէին գնալ՝ ե( կը համաձայնուէի որ հարսը կառքով գար:

Երիտասարդ անհաւատին, ինչպէս երևաց, խորթ թուաց իմ առաջարկութիւնը: Նա յետոյ ինձ յայտնեց, որ իրան իրաւունք էր տրուած մի քանի բացատրութիւններ տալ իր քրոջ օժտի մասին: Նա ասաց, որ ամուսնութեան օրը՝ իր քոյրը մի որոշ գումար կը ստանար իր հօրից, և խնդրեց ինձ յայտնել թէ ես ինչ ունէի, թէ ես ինչքան փող կարող էի յատկացնել նրան:

Ես իսկոյն յիշեցի այն բոլոր դէպքերը որ պատահել էին ինձ Շաքարլարի հետ ամուսնանալու. սակայն միևնոյն ժամանակ զգացի որ գոնէ Անգլիայում այդ տեսակ խաբէութիւնները ընթացիկ չէին: Բաւական ժամանակ ես լուռ մնացի. չէի հասկանում ինչ պատասխանել, որովհետև շատ քիչ էի պատրաստուած այդպիսի հարցի համար:

Ճիշտը խոստովանած՝ ես չափից աւել էի վստահացել ինձ վրայ որպէս իշխանի, և այժմ վատ տեղ էի բռնուել: Ես վերջապէս յայտնեցի իմ երիտասարդ բարեկամին, որ թէև ես անհամբեր էի ամուսնանալու, այնուամենայնիւ ինձ հարկաւոր էր մի քիչ մտածել իր առաջարկած լուրջ հարցի մասին և ապա լուր տալ:

Նա կրկին ստիպեց ինձ քրիստոնեայ դառնալ: Ես էլ դիտենալով որ քրիստոնեայ դառնողն երբէք չէ կնթարկում այն տանջանքներին, որ կրում են մուսուլման կամ հրէայ դարձողը, յայտնեցի նրան որ իր խնդիրք կատարելու համար մեծ դժուարութիւն չկար ինձ համար, սակայն աւելացրի որ այդ քանի համար էլ՝ ինձ ժամանակ էր հարկաւոր լաւ մտածելու:

Նա ելաւ գնալու. բայց յանկարծ որպէս թէ մի բան մոռացել էր՝ կանգ առաւ և ասաց.

— Գիտէ՞ք, իշխան, մենք շատ մտահոգ ենք որ մեր քոյրը կարգուի աշխարհում, և նրա ամուսնութիւնը երջանկութեամբ պսակուի. և քանի որ ձեր երկիրը, ձեր սովորութիւնները և մինչև իսկ դուք ինքներդ նոր էք մեզ համար, ուրեմն կը ներէք իմ ծնողներին, եթէ նրանք աշխատել են որքան կարելի է իրանց հարկաւոր եղած տեղեկութիւններ հաւաքել: Հայրս մի նամակ է գրել գեսպանի մէջմանդարին, և նրա կարծիքն ու խորհուրդն է հարցրել ձեր մասին: Ահա այդ նամակի պատասխանը. դուք կարող էք կարդալ, և եթէ որևէ դիտողութիւն ունէք, խնդրեմ յայտնեցէք:

Եւ նա ինձ տուեց մի նամակ և հեռացաւ բարեկամական